

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #08

Օգոստոս 2018

Երևան, Հայաստան



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մենդի վերամշակում.....	3
Տեքստիլ արտադրություն .....	5
Շինարարություն .....	8
R&D .....	11
Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....	12
Կոսմետիկա.....	14
Առողջապահություն .....	15
Այլ ոլորտներ .....	17
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	21
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	22

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մննդի վերամշակում



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Մննդի ոլորտում գործող պորտուգալական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Պորտուգալական ընկերությունը, որը վաճառում է տարբեր տիպի նախուտեստներ, համեմունքներ, հյութեր և քաղցրավենիքներ, փնտրում է դիստրիբյուտորներ, ովքեր կարող են շուկայահանել այդ արտադրատեսակները ԵՄ և ԵՄ-ից դուրս: Ընկերությունը փնտրում է գործընկեր նման ապրանքների վաճառքի և տարածման ոլորտում:

Ծածկագիր. BOPT20171004002

### Աբրուզո տարածաշրջանում գտնվող իտալական ֆերման, որն արտադրում է բարձրորակ գյուղմթերք, փնտրում է դիստրիբյուտորներ

Իտալական ընտանեկան ընկերությունը, որն արտադրում և վաճառում է պահածոյացված բանջարեղեն, մակարոնեղեն և ջեմեր, որոնց հումքն իսկ մշակվում է ֆերմայում, ունի արտադրական բարձր կարողություններ և երաշխավորում է ամբողջ արտադրական գործընթացը: Ընկերությունը ցանկանում է արտերկրում ընդլայնել իր գործունեությունը և փնտրում է օտարերկրյա ներմուծողներ, դիստրիբյուտորներ և գործակալներ համագործակցության համար:

Ծածկագիր. BOIT20180703001

---

**Բարձրորակ պանիր արտադրող պորտուգալական ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ**

Պորտուգալական ընկերությունը, որն արտադրում է կաթնամթերք, պանիր, կաթ և կարագ, փնտրում է առևտրի միջնորդներ ԵՄ շուկայում և դրանից դուրս:

[Ծածկագիր. BOPT20171006002](#)

**Մանդային բաղադրիչների և սննդային հավելումների մատակարարն ու արտադրողն առաջարկում է իր արտադրական հնարավորությունները ենթապայմանագրային և արտադրական համաձայնագրերի ներքո**

Մանդի հավելումներ արտադրող սլովենական ընկերությունը տեղափոխվել է նոր տարածք և զգալիորեն ավելացրել իր արտադրական կարողությունները: Այդ իսկ պատճառով, ընկերությունն առաջարկում է իր հավելյալ արտադրական հնարավորությունները ենթապայմանագրային կամ արտադրական համաձայնագրերի ներքո:

[Ծածկագիր. BOSI20180126001](#)

**Պորտուգալական կոռպերատիվը, որն արտադրում է արքայախնձոր, փնտրում է առևտրի միջնորդներ:**

Պորտուգալական կոռպերատիվը, որը մասնագիտացած է Ազորներում արքայախնձորի աճեցման և առևտրայնացման գործընթացում, փնտրում է առևտրային գործակալներ և/կամ դիստրիբյուտորներ հնարավոր պայմաններով և գիտելիքներով՝ շուկայահանելու համար իրենց արտադրանքը ԵՄ-ի տարածքում և դրանից դուրս:

[Ծածկագիր. BOPT20171017001](#)

**Թեյ արտադրող պորտուգալական ընկերությունը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ**

Պորտուգալական ընկերությունը (Ազորյան կղզիներից), որն արտադրում է թեյ, փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ՝ արտահանելու իր արտադրանքը ոչ միային ԵՄ երկրներ, այլ նաև՝ օտարերկրյա այլ շուկաներ:

[Ծածկագիր. BOPT20171010002](#)

**Գործարար համագործակցության հարցումներ**

## Գերմանական ընկերությունը, որն արտադրում է յուղեր բարձր յուղայնությամբ, փնտրում է ձիթատու սերմերի մատակարարներ

Գերմանական ընկերությունը, որը մշակում է ձիթատու սերմեր՝ ստանալու համար բարձր յուղայնությամբ յուղեր սննդի, կոսմետիկայի կամ այլ կիրառության նպատակով, կենտրոնացած է վերահսկվող օրգանական մշակում անցած հումքի վրա: Ընկերությունն այժմ փնտրում է բնական հումքի մատակարարներ Եվրոպայում և ողջ աշխարհում, նաև հետաքրքրված է տարածման ծառայությունների համաձայնագրերով:

Ծածկագիր. BRDE20180712002

## Մանդաթերք ներմուծող լեհական ընկերությունը փնտրում է թարմ բանջարեղեններ և մրգեր տարածման համաձայնագրերի ներքո

Լեհական ընկերությունը, որը զբաղվում է մի շարք թարմ մրգերի և բանջարեղենների (օրինակ՝ նարինջ, բանան, կիվի, մանդարին, խնձոր, սեխ, դեղձ, սալոր, խաղող, նեկտարին, կիտրոն, սմբուկ, վարունգ և այլն) ներմուծմամբ և տարածմամբ, այժմ փնտրում է այս բոլոր մրգերի և բանջարեղենների (հիմնականում՝ խաղող, նեկտարին և դեղձ) մատակարարներ Եվրոպայից (հատկապես՝ Հունաստանից) և այլ երկրներից՝ տարածման համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRPL20180716001

## Տեքստիլ արտադրություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

---

**Հունգարական ընկերությունը տեքստիլի ոլորտից փնտրում է ձեռքբերման կամ արտադրական համաձայնագրեր**

Մարքավորումներով լավ հագեցած կարուձևի ոլորտում գործող հունգարական ընկերությունն առաջարկում է ձեռքբերման համաձայնագրեր: Այս ընկերության սեփականատերը ցանկանում է մաքրել իր պորտֆելը, ուստի փնտրում է իրավահաջորդ: Արտադրանքը կենտրոնացված է տրիկոտաժե գործվածքներից արտադրված ֆունկցիոնալ ներքնազգեստի, աշխատանքային հագուստի և հանգստի համար նախատեսված հագուստի վրա՝ առաջին և միջին դասի համար: Ընկերությունն ունի GOTS, STeP և ISO սերտիֆիկատներ: Այն փակում է էլեկտրատեքստիլի իր ծախսերը ինքնաարտադրվող արևային էներգիայի միջոցով: Ընկերությունն առաջարկում է ընկերությունը (ձեռքբերում) կամ իր արտադրական հնարավորությունները (արտադրական համաձայնագիր):

**Ծածկագիր. BOHU20180628002**

**Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է տեքստիլի արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ**

Բուլղարական ընկերությունը մասնագիտացած է բարձրորակ կանացի հագուստի դիզայնի, մշակման և արտադրության ոլորտում: Ընկերությունն առաջարկում է դիզայնը, գործվածքները և որակը, որոնք գերազանցում են ապրանքների արժեքը՝ տալով գնի և որակի լավ հարաբերակցություն: Ճիշտ է, ընկերությունը մասնագիտացած է կանանց մեծ չափսերի հագուստի արտադրության վրա, բայց այն կարող է առաջարկել չափսերի լայն տեսականի: ՓՄՁ-ն ցանկանում է գտնել պոտենցիալ գործընկերներ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

**Ծածկագիր. BOBG20171130006**

**Ընկերությունը, որը գործում է տարբեր տիպի հագուստների CMT (կտրել-պատրաստել-կարճացնել) արտադրության ոլորտում, առաջարկում է իր փորձը՝ նորաձևության ոլորտի ձեռնարկությունների հետ ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո**

Բուլղարական ՓՄՁ-ն, որը 16 տարվա փորձ ունի հագուստի արտադրության կազմակերպման, կառավարման և վերահսկման ոլորտում, առաջարկում է իր փորձը նորաձևության ոլորտի ընկերություններին: Այն ցանկանում է հաստատել ծառայությունների համաձայնագրեր հագուստի կապալառուների և դիստրիբյուտորների, նորաձևության ցանցերի, բրենդ ստեղծողների և հագուստի արտադրության և մատակարարման համար:

**Ծածկագիր. BOBG20161213002**

**Բտալական ընկերությունը, որը մասնագիտացած է տեքստիլի արտադրության և տարածման ոլորտում, փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ:**

Բտալական ընկերությունը, որը 1950 թվականից հանդիսանում է տեքստիլ (կտորեղեն) ոլորտի առաջատար ընկերություններից մեկը, մասնագիտացած է տեքստիլի արտադրության, տարածման, ներմուծման/արտահանման ոլորտում և փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ արտերկրում: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BOIT20180608001

**Լեհական ընկերությունը, որն արտադրում է օրիգինալ և պրակտիկ նվերների հավաքածուներ երեխաների և նրանց ծնողների համար, փնտրում է օտարերկրյա դիստրիբյուտորներ:**

Նոր հիմնված լեհական ընկերությունն արտադրում է օրիգինալ և պրակտիկ նվերների հավաքածուներ երեխաների և նրանց ծնողների համար, որոնք փաթեթավորված են ձեռագործ բամբակյա զամբյուղներում: Հաշվի առնելով երեխաների հարմարավետությունը՝ հավաքածուների համար նախատեսված ապրանքները անվնաս են և ունեն համապատասխան սերտիֆիկատներ: Ընկերությունը փնտրում է օտարերկրյա դիստրիբյուտորներ (մեծածախ և մանրածախ առևտրի համար), ովքեր փորձ ունեն արքեսուարների և երեխաների համար նախատեսված ապրանքների վաճառքում:

Ծածկագիր. BOPL20180724001

## Գործարար համագործակցության հարցումներ

**Կոշիկի դիզայները և արտադրողը փնտրում է ենթակապալառուներ և արտադրողներ**

Հունական մրցանակակիր, լյուքս դասի (բրենդային) կանացի կոշիկների դիզայներն ու արտադրողը, որն արտադրում է բարձրորակ կոշիկներ Հունաստանում՝ կիրառելով լյուքս դասի իտալական կաշի և կոշկեղենի մասեր (կոշիկի կաղապար, կրունկներ և այլն), փնտրում է ենթակապալառուներ և/կամ արտադրողներ, ովքեր կարող են արտադրել կոշիկներ և/կամ կոշիկի մասեր ընկերության դիզայնով՝ ենթապայմանագրային կամ արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRGR20180702001

## Հագուստի ոլորտում գործող սկսնակ դանիական ընկերությունը փնտրում է արտադրողներ

Երիտասարդ սկսնակ դանիական ընկերությունը ցանկանում է սկսել կանանց և տղամարդկանց ներքնազգեստի արտադրությունը օրգանական բամբակից, վերամշակված պոլիէթիլենտերեֆտարատից (PET) և Lenzing MicroModal գործվածքներից: Ընկերությունը փնտրում է արտադրողներ, որպեսզի աջակցի նրանց ստեղծելու առաջին հավաքածուն:

Ծածկագիր. BRDK20180208001

## Շինարարություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

**Հորատիչներ և դրանց առնչվող գործիքներ արտադրող ընկերությունը փնտրում է գործընկերներ**

Լավ հաստատված ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որն արտադրում է հորատիչներ և դրանց առնչվող գործիքներ, փնտրում է նորարարական շինարարական ընկերություններ առաջարկելու համար պատվերով արտադրական հնարավորություններ և/կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BOUK20180711001

**Սարքավորումներ պատրաստող գերմանական ընկերությունը, որը մասնագիտացած է մեծ և ծանր սարքավորումների մշակման ոլորտում, փնտրում է գործընկերներ**

Գերմանական ՓՄՁ-ն, որը գործում է մեծ և ծանր մեքենաների (40 տոննա վերամբարձ



կռունկի հզորությամբ) մասերի մշակման ոլորտում, փնտրում է գործընկերներ: ՓՄՁ-ն առաջարկում է ծանր պողպատի կառուցվածքներ, բարձր ճշգրտությամբ հաստոցներ, կոմպլեքս մասերի և բաղադրիչների մեխանիկական մշակում՝ մինչ ամբողջական հավաքածուն, բաղադրիչների արտադրություն հաջորդական հավաքմամբ, ներառյալ՝ էլեկտրական և օդաճնշական, հատուկ մեքենաշինություն, այդ թվում՝ շինարարություն: Թիրախային համագործակցությունը կարող է լինել ենթապայմանագրային կամ արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BODE20180702002

### **Ընկերությունը Միացյալ Թագավորությունից փնտրում է եվրոպական դիստրիբյուտորներ շինարարության ոլորտում**

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որը գտնվում է Անգլիայի հարավ-արևելքում, արտադրում է իր սեփական, ցածր գին ունեցող մեկուսիչ ծեփի առաջին շերտերը, սվաղները և հավասարեցնող չորսունները և այժմ ցանկանում է հաստատել տարածման ծառայությունների նոր համաձայնագրեր: Նորարարական մեկուսիչ նյութերը պատրաստված են հանքային նյութերից և օդաթափանց են, թեթև, ձայնամեկուսիչ, հրակայուն և էներգախնայող: Ապրանքները սերտիֆիկացված են և նախատեսված են ներքին և արտաքին պատերի և հատակների համար:

Ծածկագիր. BOUK20180716002

### **Իռլանդական ընկերությունը փնտրում է գործընկերներ**

Իռլանդական ինժեներական ընկերությունն առաջարկում է ճանապարհների սպասարկում և ակտիվների կառավարման խորհրդատվություն հաճախորդներին ամբողջ աշխարհում: Գլխավոր տնօրենն ունի 35 տարվա միջազգային փորձ ճանապարհների դիզայնի, շինարարության և սպասարկման ոլորտներում: Ընկերությունը նաև հատուկ փորձ ունի հանրային-մասնավոր համագործակցության (PPP) ճանապարհաշինության պայմանագրերի փաստաթղթերի վարման գործընթացում: Ընկերությունը ցանկանում է մշակել առևտրային համաձայնագրեր ատլանտիկյան, ենթապայմանագրային և/կամ համատեղ ձեռնարկության համաձայնագրերի ներքո ճանապարհաշինության ինժեներիայի ծրագրերի շրջանակներում:

Ծածկագիր. BOIE20170518001

### **Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ կամ առևտրականներ առևտրային կամ տարածման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով**

Հոլանդական ՓՄՁ-ն արտադրում է օպտիկամանրաթելային կոմպոզիտ պրոֆիլներ, որոնք պատրաստված են պոլտրիոզով: Ընկերությունը մասնագիտացած է բարձրորակ կոմպոզիտ պրոֆիլների մշակման և արտադրության ոլորտում, որոնք հիմնված են ապակե, ածխածնային և արամիդ օպտիկամանրաթելային պլաստմասսայի վրա: Բացի ստանդարտ

ապրանքների տեսականուց, ընկերությունը նաև մշակում է հատուկ պատվերով արված պրոֆիլներ: Ընկերությունը փնտրում է առևտրականներ և դիստրիբյուտորներ, ովքեր հետաքրքրված են առևտրային գործակալության և տարածման համաձայնագրերի ներքո համագործակցությանը:

**Ծածկագիր. BONL20180327001**

### **Ֆրանսիական ընկերությունը փնտրում է առևտրային կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր**

Ֆրանսիական ընկերությունը, որն արտադրում է այլումինե կոմպոզիտ վահանակներ և թիթեղներ, նաև՝ կծիկ կաղապարով այլումինե կրկնակի թիթեղային վահանակներ, ցանկանում է զարգացնել իր վաճառքը Եվրոպայում: Թիրախային ոլորտներն են՝ ներքին հարդարանք, արդյունաբերություն (օրինակ՝ մեքենաների երեսպատում), տրանսպորտ (ավտոբուսների, տրամվայների, զբոսանավերի, նավերի, ծածկասայլերի ինտերիեր), մաքրում և լուսավորում: Ընկերությունը փնտրում է լավ հայտնի վաճառքի գծով գործընկերներ տեղական շուկայում, ովքեր ցանկանում են ընդլայնել իրենց առաջարկած ապրանքները առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

**Ծածկագիր. BOFR20180522001**

## **Գործարար համագործակցության հարցումներ**

### **Մարքավորումներ արտադրող գերմանական ընկերությունը փնտրում է մատակարար/ենթակապալառու փոքր բաղադրիչների համար և գործընկերներ տեղում տեղադրվող էլեկտրակայանների համար**

Գերմանական ՓՄՁ-ն, որը գործում է մեխանիկական ինժեներիայի արդյունաբերության ոլորտում և արտադրում է բարձր ճշգրտության սարքավորումների բաղադրիչներ պատվիրատուների համար արդյունաբերության տարբեր ոլորտներից, փնտրում է մատակարարներ կամ ենթակապալառուներ, ովքեր կարող են արտադրել փոքր մետաղական բաղադրիչներ տեխնիկական գծանկարներին համապատասխան: Ավելին, ընկերությունը փնտրում է գործընկերներ էլեկտրական ինժեներիայի ոլորտում տեղում տեղադրվող էլեկտրակայանների համար: Ընկերությունը ցանկանում է հաստատել ենթակապալանագրային, ինչպես նաև՝ արտադրական համաձայնագրեր:

**Ծածկագիր. BRDE20180702001**

## Իտալական ընկերությունը փնտրում է հիդրավլիկ պոմպեր արտադրողներ

Իտալական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է բնակելի և կենցաղային տարածքների համար նախատեսված ավտոմատ համակարգերի արտադրության ոլորտում, փնտրում է հիդրավլիկ պոմպեր արտադրող գործընկեր՝ մշակելու համար ծրագիր անվտանգ ճանապարհային արգելապատնեշների և պարսպի ցցերի համար: Ընկերությունը հետաքրքրված է արտադրական կամ ենթապայմանագրային համաձայնագրերով փորձ ունեցող հիդրավլիկ պոմպեր արտադրողների հետ (հատկապես պարսպի ցցերի հետ առնչվող):

Ծածկագիր. BRIT20180626001

## R&D




Լոնդոնում գտնվող համալսարանը փնտրում է փորձ աղետների կառավարման/կայուն շինությունների կառուցման/առաջին հարցվողների և մեծ տվյալների բազայի հետ կապված՝ դիմելու համար H2020 մրցույթին, որը վերաբերում է աղետներին դիմակայող հասարակությունների մարդկային գործոնների, ինչպես նաև՝ սոցիալական, հասարակական և կազմակերպչական ասպեկտներին:

Լոնդոնում հիմնված համալսարանը մշակում է ծրագիր H2020 մրցույթի՝ «աղետներին դիմակայող հասարակությունների մարդկային գործոնների, ինչպես նաև՝ սոցիալական, հասարակական և կազմակերպչական ասպեկտների վերաբերյալ» թեմայի ներքո: Ծրագրի նպատակն է մշակել հասարակության կայունության գործիքակազմ, որը կկարողանա սոցիալական կարողություններ ստեղծել ԵՄ-ում աղետների համար: Ընկերությունն այժմ փնտրում է գործընկերներ աղետների կառավարման/կայուն շինությունների կառուցման/առաջին հարցվողների, մեծ տվյալների բազայի և սոցիալական մեդիայի կառավարման համակարգերից:

**H2020-WIDESPREAD-2018-2020:ԹՎԻՆԻՆԳ-Վերարտադրողական բժշկության ոլորտում գործընկերների որոնում**

Առաջատար բուլղարական համալսարանը մշակում է մրցույթի առաջարկ «H2020-WIDESPREAD-2018-2020. ԹՎԻՆԻՆԳ» մրցույթին հայտ ներկայացնելու համար: Ծրագրի նպատակն է ավելացնել ինստիտուցիոնալ կարողությունները և զարգացնել հետազոտական պրոֆիլը կենսաբանության ոլորտում, մանավորապես՝ էմբրիոլոգիայ և մարդկային սաղմի զարգացում, ցողունային բջիջների կենսաբանություն և հյուսվածքների վերականգնում: Ընկերությունը փնտրում է հայտնի ակադեմիական/հետազոտական ինստիտուտներ, որոնք գործում են այս ոլորտներում:

## Տեղեկատվական տեխնոլոգիաներ



### Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական SS ընկերությունն առաջարկում է գույքի վարձակալության կառավարման ծրագիր ֆրանչայզի համար և փնտրում է ներդրողներ

Լեհական SS ընկերությունն առաջարկում է գույքի վարձակալության կառավարման ծրագիր և հետաքրքրված է ֆրանչայզի գործակալության համաձայնագրի ստորագրմամբ, նաև՝ ֆինանսական համաձայնագրերով այն ներդրողների հետ, ովքեր հետաքրքրված են ծրագրի հետագա մշակմամբ և արտերկրում արտադրանքի ընդլայնմամբ:

Կորեական SS ընկերությունը փնտրում է վաճառքի գծով տեղական գործընկեր իր P2P մեսինջերի և VoIP (ձայնային ինտերնետի հաղորդագիր) հավելվածի համար առևտրային կամ

### տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո

Կորեական ընկերությունը մշակել է նոր տիպի մեսինջեր և VoIP ծրագիր, որոնք ապահովում են տվյալների ապահով փոխանցումը: Բոլոր հաղորդագրությունները կողավորված են և գաղտնի, քանի որ հաղորդագրությունների և զանգերի համար առանձին փոխանակման սերվեր չկա: Հավելվածը հնարավորություն է տալիս կապել օգտատերերի սմարթֆոնները ուղիղ իրար հետ P2P (նմանը նմանին) տեխնոլոգիայով՝ առանց հավաքելու որևէ տեղեկատվություն: Ընկերությունը փնտրում է տեղական վաճառքի գործընկեր իր արտադրանքի համար՝ առևտրային կամ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BOKR20180705001

### Լիտվական SS ընկերությունը, որը մասնագիտացած է ծրագրերի մշակման ծառայությունների ոլորտում, առաջարկում է աուստրալիացային և ծառայությունների համաձայնագրեր, ինչպես նաև՝ ենթապայմանագրային համագործակցություն

Լիտվական SS ընկերությունը տրամադրում է ծրագրային մշակման ծառայություններ՝ օգտագործելով վերջին բաց կոդերով տեխնոլոգիաների բլոկը: Այն առաջարկում է ամբողջական ծառայություններ ծրագրային ապահովման մշակման ցիկլի համար՝ նախատիպեր, գրաֆիկական դիզայն, համակարգային և տվյալների բազայի ճարտարապետական դիզայն, ծրագրավորում, թեստավորում, հոսթինգ, տեղակայում և աջակցություն: Ընկերությունն առաջարկում է աուստրալիացային ծառայություններ և պատրաստ է հանդես գալ իբրև կապալառու (ծառայությունների մատուցման համաձայնագիր) կամ ենթակապալառու:

Ծածկագիր. BOLT20180601001

### Ընկերությունը Միացյալ Թագավորությունից առաջարկում է ծրագրի մշակում, տվյալների վերլուծություն և հետազոտական ծառայություններ ենթապայմանագրային կամ ծառայությունների մատուցման պայմանագրի ներքո

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից տրամադրում է ծրագրերի մշակման, տվյալների վերլուծության և հետազոտական ծառայություններ Եվրոպայի, Ասիայի և Մերձավոր Արևելքի երկրների հաճախորդներին: Ընկերությունը լավ փորձ ունի հետազոտական և նորարարական ծրագրերի ամբողջական ցիկլային փուլերում: Այժմ այն փնտրում է կազմակերպություններ, ովքեր հետաքրքրված կլինեն օգտագործել վերը նշվածը իրենց Հորիզոն 2020-ի կամ այլ դրամաշնորհային ծրագրերում ենթապայմանագրային կամ ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOUK20180620001

## Գործարար համագործակցության հարցումներ

---

**Նորարարական թուրքական վեբ և բջջային հավելվածներ մշակող ընկերությունը փնտրում է բիզնես գործընկերներ առևտրային գործակալության համաձայնագրի ներքո**

Թուրքական ընկերությունը, որը գործում է տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) լուծումների ոլորտում, հատկապես՝ վեբ և բջջային հավելվածներ, մշակել է մի շարք լուծումներ Թուրքիայի և եվրոպական երկրների համար: Հավելվածները հիմնականում կիրառվում են շինարարության, ինժեներիայի և ինտերնետային առևտրի ոլորտներում: Ընկերությունը ցանկանում է ընդլայնել իր պորտֆելը և փնտրում է SS ընկերություններ, որոնք փնտրում են գործակալ Թուրքիայում: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր:

Ծածկագիր. BRTR20180426002

## Կոսմետիկա



## Գործարար համագործակցության առաջարկներ

---

**Կոսմետիկայի ոլորտում գործող ընկերությունը փնտրում է միջազգային դիստրիբյուտոր գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:**

Բրիտանական ընկերությունն արտադրում է մաշկի համար նախատեսված փաթեթավորված ապրանքներ բնական հումքի մաքուր բաղադրիչներով, որոնք ապահովում են մաշկի համար լավագույն արդյունքներ: Բոլոր արտադրատեսակները հասանելի են սոցիալական ցանցի հարթակում: Բրիտանական ընկերությունը փնտրում է միջազգային դիստրիբյուտոր, ով ցանկանում է աշխատել տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BOUK20180629001

**Հունգարական ընկերությունը, որն արտադրում է բնական կոսմետիկա, փնտրում է դիստրիբյուտորներ/լիցենզավորված գործընկերներ**

Հունգարական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է բնական կոսմետիկայի մշակման և

արտադրության ոլորտում, հատկապես՝ մազերի, մարմնի և դեմքի խնամքի ոլորտներում, փնտրում է դիստրիբյուտորներ: Ոչ թանկ, առանց պարաբենի և հավելանյութերի բնական կոսմետիկ արտադրանքը կարող է կիրառվել կանանց և տղամարդկանց կողմից: Ընկերությունը փնտրում է լիցենզավորված գործընկերներ:

Ծածկագիր. BOHU20180719002

### **Բնական բաղադրիչներից հավաստագրված կոսմետիկա արտադրող բուլղարական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Բուլղարական ընկերությունը, որն արտադրում է բարձրորակ կոսմետիկ միջոցներ բնական բաղադրիչներից, փնտրում է դիստրիբյուտորներ դեղատների, դեղորայքի խանութների և կոսմետիկ խանութների շրջանում ողջ աշխարհում: Արտադրանքի բաղադրիչները զգուշորեն են ընտրված և պարունակում են գրեթե 98% բնական բաղադրիչներ: Կոսմետիկ միջոցները ներառում են՝ մազերի, մաշկի, անհատական հիգիենայի և մարմնի խնամքի միջոցներ:

Ծածկագիր. BOBG20180709004

## **Առողջապահություն**



### **Գործարար համագործակցության առաջարկներ**

#### **Բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Շվեդական բժշկական տեխնոլոգիական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ ողջ աշխարհում: Արտադրանքը ներառում է՝ գործիքների սեղաններ, բեռնման համակարգեր, խորանարդային համակարգեր: Նրանք տրամադրում են պարզ և ավելի արդյունավետ

լուծումներ վիրահատարանների և ստերիլիզացման բաժանմունքների աշխատանքի համար: Ընկերությունը փնտրում է փոքր և միջին չափի դիստրիբյուտորներ, որոնց թիրախ են հանդիսանում հիվանդանոցների վիրահատարանների ապրանքները:

Ծածկագիր. BOSE20180706001

**Իտալական ընկերությունը, որն արտադրում է սպորտային ռեաբիլիտացիայի ֆիզիոթերապևտիկ սառը ուլտրաձայնային սարք, փնտրում է գործակալներ և/կամ դիստրիբյուտորներ**

Իտալական ՓՄՁ-ն, որը գտնվում է Իտալիայում՝ Հռոմում, մասնագիտացած է ֆիզիոթերապիայի համար նախատեսված էլեկտրական-բժշկական սարքավորման դիզայնի, մշակման և արտադրության ոլորտում, մշակել է սառը ուլտրաձայնային սարք, որը մեծ էֆֆեկտիվություն ունի ցանկացած բորբոքման և ցավի բուժման պարագայում, մասնավորապես՝ սպորտային ռեաբիլիտացիայի ոլորտում:

Ծածկագիր. BOIT20180706001

**Ֆրանսիական ընկերությունը, որը մասնագիտացած է սննդային հավելումների և հատուկ բժշկական կիրառման սննդի արտադրության ոլորտում, փնտրում է դեղագործական ապրանքների դիստրիբյուտորներ ողջ աշխարհում:**

Ֆրանսիական ընկերությունը, որը հիմնադրվել է 2015 թվականին և մասնագիտացած է սննդային հավելումների և հատուկ բժշկական կիրառման սննդի դիզայնի, արտադրության և մարքեթինգի ոլորտում(FSMP), փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում: Ընկերությունը հետաքրքրված է վերը նշված տարածաշրջաններում էքսկլյուզիվ տարածման ծառայությունների համաձայնագրերով նորարարական սննդային հավելումների և կլինիկական կիրառման կերակուրների տարածման և խթանման նպատակով:

Ծածկագիր. BOFR20180615002

**Գերմանական ՓՄՁ-ն, որը գործում է առողջապահության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ**

ՓՄՁ-ն, որը գտնվում է Հարավային Գերմանիայում, գործում է առողջապահության ոլորտում: Ընկերության գործադիր տնօրենը մշակել է ախտահանող փայտ, որը պաշտպանում է տարբեր պաթոգենիկ մանրէներից, որոնք առկա են լինում բաժակներում, խմիչքների տարաներում, ինչպես նաև՝ սեղանին դրվող պարագաներում: Պաշտպանությունը արդյունավետ է, արագ, ճկուն, էֆեկտիվ և կարող է հեշտորեն իրականացվել ցանկացած անձի կողմից: Ընկերությունն այժմ փնտրում է դիստրիբյուտորներ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:



## Գործարար համագործակցության հարցումներ

**Լեհական առևտրային ընկերությունը փնտրում է հատուկ վիրահատական գործիքների մատակարարներ և առաջարկում է առևտրային կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր**

Բժշկական գործիքների լեհական դիստրիբյուտորը ցանկանում է ընդլայնել իր պորտֆելը և փնտրում է բարձրորակ, մեկանգամյա և բազմակի անգամներ կիրառվող գործիքներ հիվանդանոցներում և վիրահատարաններում, ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում և նեոնատոլոգիական բաժանմունքներում կիրառելու նպատակով: Ընկերությունն ակնկալում է առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BRPL20180313001

## Այլ ոլորտներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

**Իսպանական ընկերությունը, որն արտադրում է սարքավորումներ ֆիթնեսի և առողջապահական կենտրոնների համար, փնտրում է դիստրիբյուտորներ իր արտադրանքի համար եվրոպական երկրներում:**

Իսպանական ընկերությունն արտադրում և վաճառում է ցանկացած տիպի սարքավորում ֆիթնես, առողջապահական և սպա կենտրոնների համար: Այն մասնագիտացած է սարքավորումների տեղադրման և սկզբից մինչև վերջ արվող աշխատանքներում: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ ֆիթնես, առողջապահական և սպա կենտրոնների պարագաների դիստրիբյուտորներ տարբեր եվրոպական երկրներում: Ընկերությունը նաև

տրամադրում է տեխնիկական և սպասարկման ծառայություններ:

Ծածկագիր. BOES20170126002

**Հիվանդանոցային մահճակալներ արտադրող ընկերությունը Հարավային Կորեայից, փնտրում է եվրոպական գործընկերներ առևտրային գործակալության և տարածման համաձայնագրերի ներքո:**

Ընկերությունը Հարավային Կորեայից գործում է մահճակալների արտադրության ոլորտում՝ սկսած 2016 թվականից և ստեղծվել է միևնույն ոլորտում 10 տարուց ավել փորձ ունեցող մարդկանց կողմից: Այժմ ընկերությունը փնտրում է եվրոպական գործընկերներ, ովքեր կօգնեն հաջողությամբ ընդլայնել իր բիզնեսը եվրոպական տարածաշրջանում: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BOKR20180320001

**Մարտկոցներ լիցքավորող սարք արտադրող չեխական ընկերությունը փնտրում է ծառայությունների կամ տարածման ծառայությունների մատուցման համաձայնագրեր**

Փոքր չեխական ընկերությունը մշակել է սարքավորում, որը պահեստավորում է տնային էներգիան: Այն էներգիայի միափուլ պահպանման պահեստ է, որն ունի մարտկոցի բլոկ, էներգիայի կառավարում, հսկողություն, էլեկտրոնային պաշտպանություն հաղորդակցություն, ինվերտիչ և ֆոտոգալվանային լիցքավորիչ: Սարքը հիմնականում նախատեսված է ներքին օգտագործման համար: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրեր PV ոլորտի դիստրիբյուտոր և տեղադրող ընկերությունների հետ:

Ծածկագիր. BOCZ20180319001

**Ապակե կահույքի դիզայներն ու արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որն արտադրում է պրեմիում դասի նորարարական ապակե սեղաններ և հայ-ֆայ միավորներ տնային, հյուրընկալության և կորպորատիվ միջավայրերի համար, փնտրում է նոր հաճախորդներ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո: Ընկերությունը հնարավորություն ունի նախագծելու եզակի պատվերով արտադրանք՝ ի համալրումն ստանդարտ տեսականուն:

Ծածկագիր. BOUK20180124001

**Իսրայելյան ընկերությունը, որն արտադրում է պոլիմերներ գունավոր տպագրության համար, փնտրում է դիստրիբյուտորներ և արտադրողներ ողջ աշխարհում**

Իսրայելյան ընկերությունը, որը 35 տարվա փորձ ունի ջրային հիմքով մի շարք ակրիլ էմուլսիաների արտադրության ոլորտում, որոնք արդեն վերջնական օգտագործողի համար

են նախատեսված, ցանկանում են իրենց մշակված պոլիմերները վաճառել DTG (միայն հագուստի համար), տեքստիլ արդյունաբերության համար թանաք արտադրողներին և դիստրիբյուտորներին ողջ աշխարհից: Ընկերությունը փնտրում է համագործակցություն դիստրիբյուտորների, թանաք արտադրողների և տեքստիլ տպիչներ արտադրողների հետ: Ընկերությունը ցանկանում է հաստատել տարածման, առևտրային և արտադրական համաձայնագրեր:

Ծածկագիր. BOIL20180306001

## Գործարար համագործակցության հարցումներ

Դիստրիբյուտորը/գործակալը շինարարության, արդյունաբերության, գյուղատնտեսության և այգեգործության համար նախատեսված գործիքների ոլորտներից փնտրում է արտադրողներ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո:

Իսրայելյան առաջատար ներմուծողը, մարկետոլոգը և վաճառողը, որը փորձ ունի շինանյութերի ոլորտում, փնտրում է շինարարության, արդյունաբերության, գյուղատնտեսության և այգեգործության համար նախատեսված պարագաներ: Ապրանքները նախատեսված են համապատասխան տեղական ձեռնարկություններում կիրառելու նպատակով: Առավելություններն են՝ երկարատև փորձ, շուկայում երկարատև առկայություն, արագ և ճկուն ծառայություններ, էքսկլյուզիվ տարածման հնարավորություններ և այլն: Ընկերությունը փնտրում է առևտրային/ֆրանչայզ գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BRIL20180712001

## Էկոլոգիապես մաքուր գովազդային ապրանքներ և գրասենյակային պիտույքներ են որոնվում տարածման համար

Լեհական ընկերությունը գործում է գովազդի ոլորտում 2003 թվականից և վաճառքում է էկոլոգիապես մաքուր գովազդային ապրանքներ և գրասենյակային պիտույքներ, ինչպես օրինակ՝ եգիպտացորենի օսլայի վրա հիմնված գրիչներ և արևային մարտկոցներով խաղալիք մեքենաները: Ընկերությունը ցանկանում է ընդլայնել տեսականին և ավելացնել նոր ապրանքներ: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրերի վրա հիմնված գործընկերություն:


Ծածկագիր. BRPL20180625001

## Արտադրական համաձայնագրերի ներքո ընկերությունը փնտրում է սանտեխնիկայի հումք արտադրողներ

Լեհական ընկերությունը, որը գործում է լոգաստենյակի կահույքի և կահավորանքի արդյունաբերության ոլորտում շուրջ 10 տարի, մասնագիտացած է սանտեխնիկայի (լվացարաններ և լվացարան-սեղանների) ոլորտում: Ընկերությունը փնտրում է նոր նյութերի մատակարարներ՝ այդ ապրանքների արտադրության համար (բացառությամբ կոնգլոմերատային կամ պինդ մակերևույթի, որոնք մինչ այժմ օգտագործում էին): Ընկերությունը հետաքրքրված է արտադրական համաձայնագրերով:

Ծածկագիր. BRPL20180620002

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

### Նորարարական էլեկտրական-բժշկական սարքավորում ցեյուլիտի և ճարպերի բուժման համար

Մերբական ընկերությունը, որն արտադրում է էլեկտրական-բժշկական սարքավորումներ, առաջարկում է նորարարական սարքավորում ցեյուլիտի և ճարպերի բուժման համար: Սարքավորումն օգտագործում է ուլտրաձայնային և էլեկտրամագնիսական ալիքների ուրույն կոմբինացիա միաժամանակ ապահովելով էլեկտրական լիպոլիզի և քաշի կորստի, ցեյուլիտի և դրենաժի բուժման հնարավորություն: Արդյունավետ յուղի կրճատումը կատարվում է առանց մկաններում կաթնաթթվային կուտակման կամ բջիջներին պատճառված վնասների: Ընկերությունը փնտրում է էլեկտրական-բժշկական սարքավորում արտադրողներ տեխնիկական աջակցությամբ առևտրային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. TORS20161024003

### Նորարարական էլեկտրո-բժշկական սարքավորում փսիխոմոտորիկ հատկությունների թեստավորման համար

Մերբական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է էլեկտրո-բժշկական սարքավորումների արտադրության ոլորտում, առաջարկում է փսիխոմոտորիկ հատկությունների թեստավորման սարք: Հիմնական նորարարական առավելությունները ներառում են նվազեցված ռեակցիայի ժամանակահատվածը, որը չափվում է վայրկյանների հազարերորդում, բարելավված հեռահար վերահսկողությունը և կիրառողի ինտուիտիվ ինտերֆեյսը: Ընկերությունը փնտրում է էլեկտրական վիրահատական, ֆիզիկական, վերականգնողական բժշկության սարքավորում արտադրող տեխնիկական աջակցությամբ առևտրային համագործակցության համար:

Ծածկագիր. TORS20161011001

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

### Մրգային կոնյակների մաքրման տեխնոլոգիա

Մերբական ընկերությունը փնտրում է գտման տեխնոլոգիա՝ մրգային կոնյակների մաքրման համար օրգանալեքսային ըմպելիքի որակը առավելագույնին հասցնելու նպատակով: Ընկերությունը փնտրում է բիզնես գործընկերներ արտադրական համաձայնագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. TRRS20170906001

### Մանդի արդյունաբերության ոլորտը ներկայացնող խոշոր ընկերությունը ցանկանում է ձեռք բերել չոր սառեցման տեխնոլոգիա

Լիտվական ընկերությունը սննդի արտադրության ոլորտից փնտրում է չոր սառեցման տեխնոլոգիա, որը հայտնի է իբրև լիֆիլիզացիա, լիոֆիլիզացիա կամ կրիոդիկացում: Այս տեխնոլոգիական առաջընթացի կիրառումը թույլ է տալիս ընկերությանը ստեղծել արտադրական նոր գիծ՝ օպտիմալացնելով ընկերության արտադրական գործընթացը: Ընկերությունը փնտրում է առևտրային/արտադրական/ծառայությունների կամ լիցենզային համաձայնագրեր:

Ծածկագիր. TRLT20171129001

## Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2018 թ. -ի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամսիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

**Սեպտեմբեր**

13/09/2018	<p><b>Successful in Slovenia 2018</b></p> <p>(Սլովենիա)</p> <p>Այս միջոցառման հիմնական թեմաներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Վերականգնվող էներգիայի աղբյուրներ</li> <li>- Շրջակա միջավայր</li> <li>- Մետաղագործություն</li> <li>- Շինարարություն</li> <li>- Փայտամշակում</li> <li>- Էլեկտրական արդյունաբերություն</li> <li>- Պլաստիկ</li> <li>- Լոգիստիկա:</li> </ul> <p><a href="https://slovenia2018.b2match.io/">https://slovenia2018.b2match.io/</a></p>	Սեջե
------------	--	------

20/09/2018	<p><b>Food for Change B2B, Salone del Gusto 2018</b> <span style="float: right;"><b>Թուրին</b></span></p> <p><b>(Բուսալիա)</b></p> <p>Այս միջոցառման ընթացքում կազմակերպիչները համագործակցում են Slow Food միջազգային ասոցիացիայի հետ և կապեր հաստատում ընկերությունների, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների միջև, որոնք ներկայացնում են գյուղմթերքի ոլորտը:</p> <p><a href="https://gusto2018.b2match.io/">https://gusto2018.b2match.io/</a></p>
21/09/2018	<p><b>International Brokerage event at construction fair FOR ARCH 2018</b></p> <p><b>Պրահա (Չեխիա)</b></p> <p>Համագործակցության հաստատման այս միջոցառումն ընդգրկում է շինարարության բոլոր ոլորտները, ինչպես օրինակ՝ .Ճարտարապետական, նախագծային, շինարարական ինժեներիայի ծառայություններ, .Շինությունների կառուցապատում, .Շինմոնտաժային աշխատանքներ, .Էլեկտրամոնտաժ, .Շինարարական նյութեր, .Պատուհանների արտադրություն, դռներ և աստիճաններ, .Ջեռուցման, ծխնելույզի կառուցվածքներ, .Տրանսպորտ և լոգիստիկա, .Մշակութային ժառանգություն, .Սպիկապատում, Աղյուսապատում, .Հատակներ, տանիքներ, ներկում, .Կայուն շինություններ և Կանաչ շինություններ, .Այլ:</p> <p><a href="http://forarch2018.talkb2b.net/">http://forarch2018.talkb2b.net/</a></p>

**Հոկտեմբեր**

03/10/2018	<p><b>Open4Business 2018 International Conference and Matchmaking Event</b></p> <p><b>Պեչ (Հունգարիա)</b></p> <p>Այս տարվա կոնֆերանսը և համագործակցության հաստատման միջոցառումները հիմնականում կենտրոնացած են մեքենաշինության, միջազգային ծրագրերի վրա՝ կլաստերների համագործակցություն, կրեատիվ արդյունաբերություններ, կանանց ձեռնարկատիրություն և S2S:</p>
------------	---



	<a href="https://open4business2018.b2match.io/">https://open4business2018.b2match.io/</a>
11/10/2018	<p><b>Matchmaking event for startups, investors and industry at the RuhrSummit 2018</b></p> <p><b>Բոխում (Գերմանիա)</b></p> <p>Հոկտեմբերի 11-12-ից հրավիրվում են սկսնակներ, ներդրողներ և արդյունաբերական ընկերություններ՝ մասնակցելու նախապես պլանավորված 15 րոպեանոց համագործակցության հաստատման հանդիպումներին համագործակցության հաստատմանը նվիրված հարթակում: Դուք ընդամենը պետք է գրանցվեք, ներկայացնեք Ձեզ և Ձեր ընկերությունը օնլայն և նախապես ընտրեք Ձեզ հետաքրքրող գործընկերներ միջոցառման համար:</p> <p>Սկսկնակները կարող են դիմել անվճար:</p> <p><a href="https://rs2018.b2match.io">https://rs2018.b2match.io</a></p>
16/10/2018	<p><b>IoT (Internet of things) Solutions World Congress 2018 - Brokerage event</b></p> <p><b>Բոխում (Գերմանիա)</b></p> <p>IoTSWC18-ը կենտրոնացած կլինի 7 ոլորտների վրա՝ արտադրություն, առողջապահություն, էներգիա և սպասարկող ծառայություններ, շինարարություն և ենթակառուցվածքներ, բաց արդյունաբերություն, IOT-ի գործարկում, բլոկչեյն և արհեստական ինտելեկտ:</p> <p><a href="http://www.b2fair.com/iot2018">http://www.b2fair.com/iot2018</a></p>
17/10/2018	<p><b>Brokerage event during Expo-Russia Armenia 2018</b></p> <p><b>Երևան (Հայաստան)</b></p> <p>Միջոցառման թիրախ հանդիսացող ոլորտներն են՝</p>

<ul style="list-style-type: none"><li>• Էներգիա</li><li>• Մեքենաներ, մետաղագործություն,</li><li>• Սարքավորումներ</li><li>• Տրանսպորտ և լոգիստիկա</li><li>• Երկրաբանություն և հանքարդյունաբերություն</li><li>• Շինարարություն</li><li>• Քիմիական արդյունաբերություն</li><li>• Հեռահաղորդակցություն</li><li>• Տեղեկատվական տեխնոլոգիաներ</li><li>• Նորարարություն և ներդրումներ</li><li>• Բանկեր և ապահովագրական ընկերություններ</li><li>• Գյուղատնտեսություն և սննդամթերք</li><li>• Բժշկություն</li><li>• Կրթություն:</li></ul> <p><a href="http://ruitc.ru/en/">http://ruitc.ru/en/</a></p>
---

21/10/2018	<p><b>SIAL 2018 - Meet buyers</b></p> <p><b>Փարիզ (Ֆրանսիա)</b></p> <p>Բոլոր տիպի սննդատեսակները՝ սկսած բաղադրիչներից, վերջացրած սարքավորումներով ու վերջնական արտադրանքով, ցուցադրված կլինեն այս ցուցահանդեսին ներկայացված 21 ուրտներում: Միջոցառմանը կկազմակերպվեն դեմ առ դեմ հանդիպումներ գնող-արտադրողների միջև, որը հիմնված կլինի միջազգային գնորդների պահանջների վրա: Ողջ Եվրոպայի արտադրողները կգան Փարիզ ցուցադրելու իրենց արտադրանքը և ներկա լինելու նախապես պլանավորված հանդիպումներին: Այս նոր տիպի միջոցառումը Ձեռնարկությունների եվրոպական ցանցի նախաձեռնություն է, որի նպատակն է կապել սննդի ոլորտի գնորդներին և արտադրողներին:</p> <p><a href="https://b2bsialparis2018.converve.io">https://b2bsialparis2018.converve.io</a></p>
------------	--

**Նոյեմբեր**

12/11/2018	<p><b>Healthcare Brokerage Event at MEDICA 2018</b></p> <p><b>Դյուսելդորֆ (Գերմանիա)</b></p> <p>Այս միջոցառման նպատակն է աջակցել ձեռնարկություններին, համալսարաններին և հետազոտական ինստիտուտներին գտնելու գործընկերներ Եվրոպայում՝ բիզնես համագործակցության, ապրանքների մշակման, արտադրության և լիցենզավորման համաձայնագրերի, համատեղ ձեռնարկության և այլ տիպի համագործակցության նպատակով:</p> <p><a href="http://www.medica-tradefair.com/">http://www.medica-tradefair.com/</a></p>
------------	--

29/11/2018	<p><b>Matchmaking event during the International textile conference 2018</b></p> <p><b>Ասիան (Գերմանիա)</b></p> <p>Երկօրյա միջոցառման ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալու ոլորտի վերջին զարգացումներին՝ մասնակցելով լիազումար նիստերին, դասախոսություններին և հատուկ սիմպոզիումներին, ինչպես նաև հնարավորություն կունենան հանդիպել պոտենցիալ գործընկերներին B2B հանդիպումների ժամանակ, որոնք կազմակերպված են NRW.International GmbH-ի կողմից:</p> <p><a href="https://additc2018.b2match.io/">https://additc2018.b2match.io/</a></p>
------------	--

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

**Նշում:** *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

*Հարգելի գործարար,*

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես ստաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

**Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:**

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: